SPECIAL
INVESTIGATION
SERVICE

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԵՎ
ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն և Վրաստանի հատուկ քննչական ծառայությունը (այսուհետ նաև՝ «Կողմեր»),

Ձգտելով ամրապնդել բարեկամական հարաբերությունները և խորացնել համագործակցությունը երկու երկրների անկախ քննչական մարմինների միջև՝ իրենց իրավասության շրջանակներում քննության ոլորտում լավագույն փորձի և պրակտիկայի փոխանակումն ապահովելու համար,

Գիտակցելով Կողմերի շահերից բխող համատեղ և/կամ միջազգային համագործակցության շրջանակներում երկկողմ համագործակցության զարգացման կարևորությունը,

Եկել են հետևյալ համաձայնության՝

Հոդված 1.
Հուշագրի առարկան

1. Կողմերը հավասարության և փոխշահավետության սկզբունքների հիման վրա կնպաստեն համագործակցության զարգացմանը՝ անկախ քննության անցկացման և լավագույն փորձի փոխանակման համար:

2. Կողմերն իրենց ցանկությունն են հայտնում ամրապնդել և առաջ մղել երկկողմ համագործակցությունը՝ երկու երկրների ներպետական օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 2
Համագործակցության ուղղություններ

Սույն Փոխըմբռնման հուշագրի (այսուհետ նաև՝ «Հուշագիր») նպատակն է զարգացնել համագործակցությունը հետևյալ ուղղություններով.

ա) հանցավորության կանխարգելման և բացահայտման լավագույն փորձի և մեթոդների փոխանակում,

բ) երկու գերատեսչությունների կարողությունների ամրապնդման համար վերապատրաստման դասընթացների անցկացում,

գ) երկու Կողմերի իրավասությանը վերաբերող հարցերի շուրջ տեղեկատվության փոխանակում,

դ) Կողմերից մեկի խնդրանքով հատուկ խորհրդակցությունների անցկացում:

Հոդված 3
Համագործակցության ձևեր

Կողմերի միջև համագործակցությունը կիրականացվի հետևյալ ձևերով.

ա) տեղեկատվության փոխանակում,

բ) պաշտոնական և աշխատանքային այցերի, համատեղ հանդիպումների, փորձագիտական խորհրդատվությունների, ճանաչողական այցերի, դասընթացների և Կողմերի կողմից որոշված այլ միջոցառումների կազմակերպում,

գ) համատեղ ծրագրի իրականացում,

դ) մասնակցություն յուրաքանչյուր երկրում իր իրավասության շրջանակներում գտնվող հարցերի շուրջ անցկացվող միջազգային թեմատիկ կոնֆերանսներին,

ե) համագործակցության այլ ձևեր, Կողմերի համաձայնությամբ, ըստ անհրաժեշտության և արդիականության:

Հոդված 4
Փոփոխություններ կատարելու ընթացակարգ

Սույն Հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, որոնք կստորագրվեն առանձին փաստաթղթերի տեսքով և ուժի մեջ կմտնեն նույն ձևով, ինչպես ուժի մեջ է մտնում սույն Հուշագիրը: Նշված ձևով ստացված փաստաթղթերը կհանդիսանան սույն Հուշագրի անբաժանելի մասը:

Հոդված 5
Վեճերի լուծում

1. Հուշագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված ցանկացած վեճ լուծվում է Կողմերի միջև խորհրդակցությունների կամ բանակցությունների միջոցով:

2. Հուշագիրը, միջազգային իրավունքի շրջանակներում, Կողմերի համար պարտադիր համաձայնագիր չի հանդիսանում:

3. Հուշագրի դրույթներից և ոչ մեկը չպետք է մեկնաբանվի որպես Կողմերին վերապահվող որևէ իրավունք կամ պարտավորություն:

Հոդված 6

Հուշագրի վավերականությունը

1. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ: Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած ժամանակ դադարեցնել սույն Հուշագիրը՝ դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցում ուղարկելով մյուս Կողմին: Այդ դեպքում Հուշագիրն ուժը կկորցնի համապատասխան գրավոր ծանուցումն ստանալուց 1 ամիս հետո:

2. Սույն Հուշագիրը ստորագրվել է Երևանում 2024 թվականի մարտի 5-ին երկու բնօրինակից՝ յուրաքանչյուրը վրացերեն, անգլերեն և հայերեն լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Թարգմանության մեջ անհամապատասխանությունների դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն տեքստին:

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտե	**Վրաստանի հատուկ քննչական ծառայություն**
Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահ	**Հատուկ քննչական ծառայության ղեկավար**
Արգիշտի Քյարամյան	**Կառլո Կացիտաձե**